եւ անկախութեամբ վարիլ. և 'ի սկզբանէ որպիսի օրինակաւ կանթեղս կախեալ և զօրէնս կատարեալ իցեն եւ իւրաքանչիւր ոք 'ի սեփհական դրանց իւրեանց եւ և մուտ արարեալ իցեն, դարձեալ ըստ վայելմի սովորութեան արասցեն. և մի լինիցին իրաւանց և տեղեաց միմեանց ձեռնամուխ, բառնալով զպատճառս բանակռուութեանց եւ վիճմանց։ Եւ յետ կարգաւորելոյ զայս ամենայն բացայայտ և ընդարձակ մանրամասն գրով ծանուցանել 'ի Դուռն, զի արձանագրեսցի 'ի Դիւանս»։ Վերջ Մուհարիմ, ١٢٥٩։

Ի հասանիլ այսր հրովարտակի յԵրուսաղէմ՝ կազմեցաւ ժողով 'ի Դատարանի առաջի մեծամեծացն այլազգեաց, ուր էին նաև Գլխաւորք միաբանութեան Հայոց և Յունաց, և ամենեքեան լուեալ զհրաման մեծի Սրքային, խոնարհեցան 'ի նշան հնազանդութեան։ Եւ զկնի աւուրց ելեալ դնացին բազմութեամբ 'ի գիւղն Բեթղեհէմ, և յեկեղեցւոջ անդ վերստին կազմեցաւ ժողով մեծ, եւ դարձեալ ընթերցան զհրովարտակն, եւ ծանուցին զիմաստս նորին երկաքանչիւր ազգաց, ապա խնդրեցին 'ի Հայոց զառաջին հրովարտակս, ընթերցան և զայնս, խնդրեցին և ըզՅունացն, այլ նոքա ոչ ետուն, պատճառելով թէ հրովարտակք իւրեանց են յԵրուսաղէմ։ Յետ այնորիկ հրաման ետուն Հայոց կախել կանթեղս 'ի վերայ երկոքին շղթայից, զոր եդեալ էր յառաջագոյն 'ի հիւսիսակողմն 'ի բաժնին Հայոց, բանալ և փակել զպատուհանս՝ անդ, զոր արգելեալ էին Յոյնք, քակել և զերկար ատիճանս, զոր շինեալ էին 'ի հարաւ և 'ի հիւսիս, բառնալ զկանթեղս 'ի սիւնազարդ սրահէն, տալ զմի բանալի արտաքին երկաթեայ դրան 'ի դործադրութիւն Հայոց։ Եւ յետ կատարելոյ զայսոսիկ իբրեւ մերձեցան քակել և փոխել զփականս հիւսիսային դրան եկեղեցւոյն Հայոց, լինել սեփհական նոցին, աղմկեալ Յունաց աղաղակ բարձին եւ յարուցին խռովութիւն մեծ. մինչեւ ձանձրանալ Դատաւորաց եւ անկատար թողուլ զդործն, զի տակաւին պահանջէին Հայք զամբողջ դործադրութիւն հրովարտակին, խնդրէին անպատճառ զբանալի հիւսիսային դրան միայն ինքեանց սեփհական, և 'ի սիւնազարդ սրահն կախել կանթեղս, դնել պատկերս եւ կանթեղս 'ի վերայ փայտեայ դրան, աւել